



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 03.06.2013
թվականի թիվ 11 որոշմամբ,
Գիտական խորհրդի 26.02.2020 թվականի
20-02-03-10 որոշմամբ հաստատված
փոփոխություններով
Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) անվանական կրթաթոշակների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Անվանական կրթաթոշակները տրամադրվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջներին բավարարող ուսանողներին՝ խրախուսելու նպատակով ուսանողի ցուցաբերակած ուսման բարձր առաջադիմությունը և կարգապահությունը:

3. Համալսարանում սահմանվում են հետևյալ անվանական կրթաթոշակները, ըստ հատկացման քանակի՝

1) «Մխիթար Հերացու» անվան՝ 5 ուսանող (3-ը՝ ընդհանուր բժշկության և ռազմաբժշկական ֆակուլտետներից, 1-ը՝ ստոմատոլոգիական, 1-ը՝ դեղագիտական ֆակուլտետներից),

2) «Վահան Արծրունու» անվան՝ 1 ուսանող ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

3) «Հակոբ Հովհաննիսյանի» անվան՝ 1 ուսանող դեղագիտական ֆակուլտետից,

4) «Լևոն Հովհաննիսյանի» անվան՝ 1 ուսանող ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

5) «Գրիգոր Արեշյանի» անվան՝ 1 ուսանող ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

6) «Ռուբեն Յոլյանի» անվան՝ 1 ուսանող ստոմատոլոգիական ֆակուլտետից,

7) «Բարդուղիեմոս Ֆանարջյանի» անվան՝ 1 ուսանող ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

8) «Լևոն Օրբելու» անվան՝ 1 ուսանող ռազմաբժշկական ֆակուլտետից:

9) «Մերուժան Ստեփանյանի» անվան՝ 1 կուրսանտ ռազմաբժշկական ֆակուլտետից: *(փոփոխություն՝ 26.02.2020, թիվ 20-02-03-10)*

4. Սույն կանոնակարգի 3-րդ կետով անվանական կրթաթոշակներ ստանալու համար սահմանված պահանջներին բավարարող ուսանողների բացակայության դեպքում, դրանք չեն հատկացվող այլ ուսանողների:

2. Ա Ն Վ Ա Ն Ա Կ Ա Ն Կ Ր Թ Ա Թ Ո Շ Ա Կ Ն Ե Ր Ի Տ Ր Ա Մ Ա Դ Ր Մ Ա Ն Ը Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Վ Ո Ղ

Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

5. Համալսարանի ֆակուլտետների դեկանատները յուրաքանչյուր տարի մայիս ամսին նախորդ ուսումնական տարվա տվյալների հիման վրա իրականացնում է անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների տվյալների ամփոփում:

6. Տվյալները ամփոփելիս հաշվի են առնվում հետևյալ պարտադիր պահանջները.

1) «Միսիթար Հերացու» անվան կրթաթոշակին կարող են հավակնել միայն գերազանց (9 և 10 գնահատականների միջին թվաբանականը՝ հարյուրերորդական ճշտությամբ) առաջադիմությամբ ուսանողները,

2) «Վահան Արծրունու», «Հակոբ Հովհաննիսյանի», «Լևոն Հովհաննիսյանի», «Գրիգոր Արեշյանի», «Ռուբեն Յոլյանի», «Բարդուղիեմոս Ֆանարջյանի», «Լևոն Օրբելու» անվանական կրթաթոշակներին կարող են հավակնել բարձր՝ լավ (7-8) և գերազանց գնահատականներով (գնահատականների միջին թվաբանականը՝ հարյուրերորդական

ճշտությամբ) առաջադիմությամբ ուսանողները: Լավ գնահատականների քանակը չպետք է գերազանցի երեքը:

3) «Մերուժան Ստեփանյանի» անվանական կրթաթոշակին կարող է հավակնել ռազմաբժշկական ոլորտում զինծառայողների, արցախյան պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց նկատմամբ առանձնակի հոգատարություն ցուցաբերած Ռազմաբժշկական ֆակուլտետի առավել բարձր առաջադիմություն ունեցող կուրսաստը: *(փոփոխություն՝ 26.02.2020, թիվ 20-02-03-10)*

4) ուսանողը նախորդ ուսումնական տարվա արդյունքներով կարգապահական տույժի ենթարկված չպետք է լինի:

7. Սույն կանոնակարգի 6-րդ կետի պահանջներին բավարարող ուսանողներին Ֆակուլտետի ղեկանատների կողմից տեղեկացվում է անվանական կրթաթոշակի հավակնորդի պարտադիր պահանջներին բավարարելու մասին:

8. Անվանական կրթաթոշակի հավակնորդը կարող է գրավոր հրաժարվել կրթաթոշակ ստանալուց:

9. Եթե կրթաթոշակի հավակնորդը տեղեկացվելուց հետո չի հրաժարվում կրթաթոշակից, սույն կանոնակարգի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պարտադիր պահանջների հետ միասին հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ միավորները՝ գումարելով առաջադիմության միավորին՝

1) հայաստանյան գիտական պարբերականներում տպագրված յուրաքանչյուր գիտահետազոտական հոդված՝ 0,5 միավոր, միջազգային պարբերականներում՝ 1 միավոր (առկայության դեպքում),

2) Համալսարանում անցկացվող օտար լեզվի քննության արդյունքում՝ 5-6 գնահատականների դեպքում՝ 0,1 միավոր, 7-8 գնահատականների դեպքում՝ 0,5 միավոր, 9-10 գնահատականների դեպքում՝ 1 միավոր,

3) համապատասխան կուրսի երաշխավորություն, որը տրվում է հետևյալ կարգով՝

ա. երաշխավորությունը տրվում է կուրսի ուսանողների առնվազն 30 տոկոսի ներկայության դեպքում, *(փոփոխություն՝ 27.03.2019, թիվ 04)*

բ. երաշխավորությունը տրվում է փակ գաղտնի քվեարկությամբ,

գ. կուրսի քվեարկությանը մասնակցած ուսանողների մինչև 70 տոկոս ձայներով տրված երաշխավորության դեպքում՝ 0,3 միավոր, 70-80 տոկոսի դեպքում՝ 0,5 միավոր, 80 և բարձր տոկոսի դեպքում՝ 1 միավոր:

10. Սույն կանոնակարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված լրացուցիչ պահանջի բավարարումը հավաստող տվյալները ուսանողը ինքն է ներկայացնում է դեկանատ, 2-րդ ենթակետով սահմանված լրացուցիչ պահանջի բավարարումը հավաստող տվյալները հավաքագրում է դեկանատը, 3-րդ ենթակետով սահմանված երաշխավորման գործընթացը կազմակերպում և ամփոփում է դեկանատը:

3. Ա Ն Վ Ա Ն Ա Կ Ա Ն Կ Բ Թ Ա Թ Ո Շ Ա Կ Ն Ե Ր Ի Չ Ա Փ Ե Ր Ը

11. Անվանական կրթաթոշակները տրամադրվում են մեկ ուսումնական տարվա համար՝ ամսական կտրվածքով, յուրաքանչյուր ամսվա համար սահմանելով հետևյալ չափերը՝

1) «Մխիթար Հերացու» անվան կրթաթոշակ՝ 50.000 ՀՀ դրամ,

2) «Վահան Արծրունու», «Հակոբ Հովհաննիսյանի», «Լևոն Հովհաննիսյանի», «Գրիգոր Արեշյանի», «Ռուբեն Յոյանի», «Բարդուղիեմոս Ֆանարջյանի», «Լևոն Օրբելու», «Մերուժան Ստեփանյանի» անվան անվանական կրթաթոշակներ՝ ՀՀ 35.000 դրամ:
(փոփոխություն՝ 26.02.2020, թիվ 20-02-03-10)

12. Անվանական կրթաթոշակները փոխանցվում են ուսանողի բանկային հաշվե-
համարին:

4. Ա Ն Վ Ա Ն Ա Կ Ա Ն Կ Բ Թ Ա Թ Ո Շ Ա Կ Ն Ե Ր Ի Տ Բ Ա Մ Ա Դ Բ Մ Ա Ն

Կ Ա Բ Գ Ը

13. Համալսարանի դեկանատները սույն կանոնակարգի 2-րդ գլխով նախատեսված պահանջներին բավարարող ուսանողների տվյալները մինչև յուրաքանչյուր տարվա մայիս ամիսը տրամադրում են Համալսարանի մանդատային հանձնաժողովին՝ համապատասխանության եզրակացություն տրամադրելու նպատակով:

14. Համալսարանի մանդատային հանձնաժողովը ձայների պարզ մեծամասնությամբ ընդունում է եզրակացություն՝ ուսանողի անվանական կրթաթոշակ

ստանալու պահանջներին համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ:

15. Ուսանողի անվանական կրթաթոշակ ստանալու պահանջներին համապատասխանելու դեպքում ուսանողի տվյալները՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերով փոխանցվում են գիտական խորհրդի քարտուղարությանը՝ գիտական խորհրդի հերթական նիստում համապատասխան որոշում կայացնելու համար:

16. Ուսանողի անվանական կրթաթոշակ ստանալու պահանջներին չհամապատասխանելու եզրակացության դեպքում, ուսանողի կրթաթոշակ տրամադրելու հարցը գիտական խորհրդում չի քննարկվում:
